

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/1

31 հունվարի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Արսեն Վանեսյանի ներկայացուցչի 16.01.2014 թ-ի դիմումը և բողոքի լրացումը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.03.2013 թ-ի թիվ 141112 վարչական ակտի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Նախ նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 18.06.2013 թ-ի նիստում քննության է առնվել քաղաքացի Արսեն Վանեսյանի 17.05.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.03.2013 թ-ի թիվ 141112 վարչական ակտի (այսուհետ նաև վարչական ակտ) դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 31/4 որոշումը, որի համաձայն ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով Արսեն Վանեսյանի 17.05.2013 թ-ի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Այնուհետև քաղաքացի Արսեն Վանեսյանի ներկայացուցչի ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված 16.01.2014 թ-ի դիմումով բերվել է միջնորդություն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.03.2013 թ-ի թիվ 141112 վարչական ակտի դեմ ներկայացված բողոքի հիման վրա կասեցված վարույթը վերսկսելու վերաբերյալ, իսկ 16.01.2014 թ-ի բողոքի լրացումով խնդրվել է վարչական ակտը վերացնել:

Նշվեց նաև, որ Արսեն Վանեսյանի ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան, ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 27-րդ բաժնի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.03.2013 թ-ի թիվ 141112 վարչական ակտը վերացնելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանը 17.10.2013 թ-ին կայացրել է թիվ ՎԴ6/0546/05/13 որոշումը, որի համաձայն Արսեն Վանեսյանի ներկայացուցչի հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 27-րդ բաժնի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26.03.2013 թ-ի թիվ 141112 վարչական ակտը վերացնելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Վերոգրյալ փաստական հանգամանքների վերաբերյալ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն առձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ»:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <դ> ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 18.06.2013 թ-ի թիվ 31/4 որոշմամբ կասեցված վարչական վարույթը ենթակա է վերսկսման և կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 18.06.2013 թ-ի թիվ 31/4 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել:
2. Քաղաքացի Արսեն Վանեսյանի ներկայացուցչի 16.01.2014 թ-ի դիմումի և բողոքի լրացումի հիման վրա վերսկսված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ